

Վ. ՓԱՓԱԶԵԱՆԻ ՊԱՏԿԵՐՆԵՐԸ

ՔՆՆՈՒԹԻՒՆ

ԱՆ. ՔԱՆԱԹԱՐԻ

«Պատկերներ Թիւրքահայոց» կեանքից, հատոր Ա. Մոսկա 1891.
2. Գինեգործի աղջիկը, Թիֆլիս 1891. 3, Խաթ-Սարա Թիֆլիս 1890,
4, Բոսֆորի ափերում, տես «Մուրճ» 1891 թ.

I

Փափազեանի գրածները բաականին լատինի են դարձել հաւ հասարակութեանը, չը նախելով ալն բանին, որ միայն երկու տարի է, ինչ նա սկսել է լուս ընծալել իւր վէպիկները և կեանքի պատկերները: Այդ չողովիւնը հասկանալի է. նա չօչալիւ է ժամանակակից հետաքրքրութիւն ունեցող կեանքի երեոյթներ և բնդմաւոր իւր գրչով լաճախ փշեցրել է իւր մասին:

Արդարեւ նորա գրածքների նիւթը կազմում են անպիսի երեոյթներ, որոնք գրաւել են ժամանակակից ժողովրդի ուշադրութիւնը և որոնց վերաբերմամբ ամենալն մի ակնարկ ընդունւում է ազահութեամբ և անհամբերութեամբ: Նիւթի մշակելու ձևն էլ նպաստել է արտաքին հետաքրքրութեան, որովհետև ամեն քալլափոխում դուրս են բերւած արտասովոր, խիստ գոչներով նկարած պատկերներ, պատմած են անարդարութեան, ճնշումների, հալածանքների, հարստահարութեան, բալց նոչնպէս և աղնւութեան ու հերոսականութեան դէպքեր: Վէպիկների ընդհանուր իմաստը լանդում է արդարութեան ու ազատասիրութեան հաստատելու և կապանքներ ու խոչնդոտներ քանդելու և հեռացնելու խնդրին: Ընթերցանութեան նպաստել են բացի այդ գրելու սահուն ոճը և պատկերների ոչ ընդարձակութիւնը:

Յս չեշտեցի պ. Փափազեանի և բեղմնաւորութիւնը: Յիրաւի երկու տարւակ ընթացքում նա տեւել է մեզ պատկերներու և վէպիկներու մի ամբողջ շարք: որոնցից կազմուել է մի լաւ հատոր և կարող է կազմուել մի երկրորդը նոյն մեծութեան: Յաճախ գրելով, Փափազեանը իրան չէ մոռա-
ցրել ընթերցող հասարակութեան առաջ: Նա հրատարակել է իւր գրածք-
ները զանազան թերթերում. «Մշակ»-ում, «Մուրճ»-ում, «Աղբիւր»-ում,
«Տարազ»-ում և ուրիշներում և առանձին գրքովներով:

Նորա գրածքների երեւոյլ ստորագրւած է ոչ միայն Կովկասի, այլ նաև երբեմն արտասահմանեան հակական մամուլում:

Մի խօսքով պ. Փափազեանը բաւականաչափ լատարարւած է և իբրև նոր գրող՝ նա տեղիք չունի տրտնջալու և զանգատուելու հասարակութեան վերայ և չի կարող մեղադրել սորան անուշագրութեան համար:

Կան արդարև վիպագրողներ, որոնց չէ լաջողում շուտ գրաւել հասարակութեան ուշադրութիւնը և որոնք պէտք է շատ սպասեն մինչև ըստ արժանոյն գնահատուին: Այդ հանգամանքը քննարկում է նոցա ստեղծագործութեան, թուլացնելով նոցա գրելու աշխուժը և եռանդը: Իւրաքանչիւր երկ դուրս է գալիս ի հարկէ մի չափնի դեր կատարելու հասարակութեան մէջ: Երբ նա լաւ է, բաց մնում է մթութեան մէջ, վարագուրի տակ, չը կարդացւած, նա մեռցնում է նորա ստեղծուելու շարժառիթը, ցամաքեցնում է նորա բղիթելու հիմնադրելու, ի հարկէ՝ կան գրածքներ, որոնք չուտով չեն կորցնում իրանց նշանակութիւնը և թէև ուշ ահու ամենաւնիւ գնահատուում են հնդկնակների ծերութեան օրերում, կամ երբեմն նոցա մահից յետոյ: Բաց հնդկնակները չեն կարող մխիթարուել այդպէս չօրհնելով, նա մանաւանդ, որ կեանքի խնդիրները միշտ փոխւում են: Իսկ վիպագրութիւնը՝ բացի այդ՝ կախած է գեղարւեստի մասին ունեցած հալեացքից և ճաշակից:

Հնդկնակներին կանոնաւոր ճանապարհով գնալու դործին կարող են օգնել և պէտք է լուրջ կերպով օգնեն ճննադատները և գրական դեկավարող ուժերը: Քննադատութիւնը չէ կարող հնդկնակին աւելի տաղանդաւոր շինել, նորան տալ աւելի ստեղծագործական ուժ: Բաց նա կարող է օգնել այդ տաղանդին և այդ ստեղծագործական ուժին՝ ուղիղ և շուտ գնահատուելու, աւելի արդիւնաւէտ լինելու, կանոնաւոր զարգանալու և թերութիւններից մի չափով ազատուելու:

Օգտուելով պ. Վ. Փափազեանի պատկերների ժողովածուի առաջին հատորից, մենք մտաբերեցինք նորա մի քանի միւս գրածքները (որոնց վերնագիրները չիւած են վերևում), թերթեցինք նորից և ներկայացնում ենք մեր դիտողութիւնների և տպաւորութիւնների արդիւնքը, չոս ունե-
նալով, որ մեր ցուցումները կուենան իրանց օգուտը, պարզելով մի վիպագրողի արժանիքը և պակասութիւնները:

Մենք ենթադրում ենք, որ ընթերցողը կարդացել է պ. Փափազեանի

գրածքները, նոցա բովանդակութիւնը հաղորդելը շատ երեսներ կը պահանջէր մեզնից և դարձեալ չէր գոհացնիլ ընթերցողին։ Օրինակներ կամ բացատրութիւններ մինք կը բերենք այն դէպքերում, երբ պէտք կը զգացուի մեր գատողութիւնները լուսարանելու։

II

Ի՞նչն է կազմում այ. փափաղեանի գրածները երեսաւու շարժառիթը՝ սէրը դէպի գեղարւեստը, կեանքը նկարագրելու ցանկութիւնը, թէ հասարակական երեւոյթների լուսարանութիւնը։

Պր. փափաղեանին, որչափ նա արտալատուել է մինչև այժմ, գրաւել են հասարակական երեւոյթները, Գեղարւեստը քիչ տեղ է բռնում նորա պատկերներում և նա մէկ մէկ ներս է մտնում իւր իրաւունքները առաջ դնելով։

Հասարակական խնդիրները եղել են թեմաներ, որոնց վերալ հիւսւել է նորա վէպը, ստեղծւել է նորա զրուցը, նկարւել է նորա պատկերը։ Երբ պէտք է համարւել, զիցուք, հարածել գիւղական վաշխառուին և ցուց տալ նորանից կրած գիւղացիների նեղութիւնները—հիւսւել է մի վէպիկ «Ճգնաւոր Նոյ»՝ անուշափ ուր ամբողջ մի համետ գիւղական ընտանիք քարուքանդ է լինում մի վաշխառու Մարտիրոս աղալի շնորհքով։ Մի ուրիշ անգամ, եթէ հարկաւոր է տեսնւել մերկացնել քահանաների ազահութեան և անբարեխղճութեան արտալատութիւնները,—հեղինակը գրել է «Ատաղ», «Մենիչէրի» պատկերները, ուր դէպքերը լարմանցրած են խիստ զոյնեղով դուրս բերելու այդ կատկութիւններով քահանաների։ Յուց տալու համար, թէ տղամարդու և կնոջ մէջ կապերը պէտք է հաստատուած լինեն սիրով հիման վերալ—գրել է «Գինեգործի աղջիկը» վէպը։ Քարեղելու համար, թէ ժողովուրդը պէտք է քաջ կերպով իրան պաշտպանի և պատրաստ լինի միշտ դիմադրելու ոսոխին—պատմւել է Խաթ-Սաբա վէպիկը։ Ամենայն մի գրածք ալդպիսով համապատասխանում է մի թեմայի, որի ներկայութիւնը գրածքի առաջին երեսներից արդէն զգացում է։

Միւս պատկերները արտալատում են այսպիսի մտքեր. պէտք է կանոնաւորել տուրքերի պահանջը, հողը հիմքն է մի ժողովրդի կեանքի (Խաթ-Սաբա), պէտք է բարեկարգել դատաւարութիւնը (Արդար դատաստան), պէտք է զսպել կեղեքողներին (Լաւօ), Պոլսից փրկութիւն չը կալ Փոքր-Ասիայի ժողովրդի համար («Հալլիկ», «Ճգնաւոր Նոյ»), մատնիչները պէտք է բարձուն (Խերան) և այլն։

Այս ամփոփումները զաղափար են կազմել տալիս այն նպատակների և իդէալների մասին, որոնց համար նա ուզում է ծառայեցնել իւր արած գիտողութիւնները և ժողոված տեղեկութիւնները։ Բոլոր պատկերները ունեն հասարակական աստառ և նոցա գրելու զրդողը եղել է հասարակական խնդիր։

Մենք կամաւ ենք ասում ծառաւորները, որովհետեւ հեղինակը պատեղ ներգործական դեր է կատարում, աշխատելով իւր ձեռքին եղած նիւթը դասաւորել աշնպէս, որ նոքա նպատէին ալս կամ աշն նախա-
գծած միտքը պարզելուն: Նա անդադար թելադրում է ընթերցողին իւր հիմնական հպեացքները, քարոզում է նոցա, թույլ չը տալով, որ ընթերցողը նիւթի մասին դատող լինի, որպիսին կարող էր նա լինել, երբ տեսնէր հարադատ պատկերներ խոր ուսումնասիրւած և հոգեբանօրէն ներկայացրած:

Ի հարկէ քարոզը կամ թելադրութիւնը օգտաւէտ դործ է, որ կարող է ժամանակակից նշանակութիւն ունենալ. սակաւն նոքա պահանջում են, որ ընթերցողը տրամադրւած լինի նոցա լսելու, որ նա գրւածքի մէջ որոնում լինի ոչ աշնքան իրականի հետ ծանօթութիւն, որչափ ինքնահաճ լուսաբանութիւններ հետաքրքիր ժամանակակից խնդիրների մասին:

Բայց, որ կարևորն է, վէպիկի, պատկերի համար բաւական չէ միայն նորա օգտաւէտ լինելը հասարակական տեսակէտից¹⁾: Զանազանութիւն կալ նոցա և հասարակ լօւածի, պատմական զրոյցի, հեքիաթի կամ դիւլօգ-
ների մէջ, վէպիկը, պատկերը պահանջում են գեղարվեստական արտա-
յայտութիւն, դուրս բերող անձերի մարմնացում, կեանքի բնաորոշ երե-
ւոյթների և տիպիքական անձնաւորութիւնների վերատեսիլում:

Այս պահանջին համապատասխանում չեն պ. Փափաղեանի պատկեր-
ները, Գեղարվեստը, ստեղծագործական մարմնացումը թույլ են նոցա մէջ
աշնքան, որ վէպի ընթերցանութիւնից մնում է միայն մի լատնի տես-
դենցիակի, մի քարոզի տպաւորութիւն և ոչ կեանքի պատկերներ:

Բոլոր վերեւ թւած վէպիկներից մէկը Խաթ-Սարան՝ ալը կող-
մից մի տեսակ բացառութիւն է կազմում: Անտեղ մեր առաջ պարզում է
պատկերների, գեղարվեստական արարչութիւնների մի շարք, որոնք ներ-
կայանում են իբրեւ ոգի և մարմին ստացած կեանքի անդրադարձումներ:
Միաների մէջ թույլ է աշն, ինչ պէտք է մարմին և ձևեր տպաւորէր ըն-
թերցողի երեսկալութեան մէջ:

Եւ վէպիկները իրանք կամ նոցա բնաւորութիւնը չեն մեղաւոր, որ
գեղարվեստը մուտք չէ գործել նոցա մէջ: Ոչ, վէպիկները աշնպէս են, որ
նոցա ընթերցողը սպասում է կեանքի երևոյթների պատկերացումների,
անձնաւորութիւնների մէջ հոգեբանօրէն մեկնւած զգացումների շար-
ժումներ:

Բայց կարծես, որ նոյն իսկ հոգեբանական կէտերը և հանգուցները
հետաքրքրական չեն թւում հեղինակի աչքում, որովհետեւ նորա գրւածք-

¹⁾ Այս յօդածում ևս խօսում եմ պարոն Փափաղեանի վէպիկների մասին, իբրեւ գեղարվեստական գրւածքների մասին: Ուրիշ տեսակէտից նորա վէպիկները իրանց ժամանակաւոր գերը կատարեցին, իբրեւ մի յայտնի դոյնէ ընթերցանու-
թեան նիւթ:

ները չաճախ կառավարում են առանց դոցա՝ Ալգալէս են «Ճղնաւոր Նոն», «Հաջի-աղան», «Կալծակը», «Սև կղզին», «Բոսֆորի ավերումը», իսկ անտեղ, ուր նոքա կան (գուցէ հեղինակի ցանկութիւնից անկախ), հեղինակը հարեանցօրէն է անցնում և բաւականանում է ակնարկներով:

Ահա մի քանիսը աչն հոգեբանական կէտերի, որոնց վերալ կանգ է առել հեղինակը:

Խաթ-Սարա բօշալի որդի Մարտոսը գնում է էրզրում և պատկուտ մի ուրիշ բօշալի աղջկալ հետ: Ապրելով քաղաքում՝ Մարտոսը և իւր ամուսինը խօսք են տալիս միմեանց հեռանալու բօշալական անարդած հասարակութիւնից և իրանց պահելու իբրև նստակեաց, քաղաքացի հալեր: Որդիներին կրթում են անպէս, որ սոքա խորշն բօշաներից և ծաղրեն նոցա ու անարգեն: Մարտոսի մալը Խաթ-Սարան մի օր լանկարծ մտնում է իւր որդու տունը և ականատես է լինում աչն ատելութեան, որ սերմանել են ծնողները նորա թոռնիկների սրտում: Սոքա անգթաբար ծաղրում են իրանց մեծ մօրը: Մանր է և տպաւորութիւն գործող աղ տեսարանը:

«Կտակ» վէպիկի մէջ Խաթուն Մարէն իւր մահաւան մօտենալը զգալուց կամենում է հաշուել իւր Մարգար եղբոր հետ, որը վաղ երիտասարդութեան ժամանակ մի ընտանեկան անբաւականութեան պատճառով նեղանում է քրոջից և խռով մնում ամբողջ կեանքը: Քոյրը կտակում է իւր ունեցածը իւր եղբորը, և միեւնոյն ժամանակ մեծ պահանջ է դրում տեսնել իւր եղբորը և իւր ամբողջ կեանքի կարօտը առնել վերջին րոպէնութում, բայց մեռնում է չը հասած ցանկութեան:

«Արդար դատաստան» պատկերի մէջ դուրս է բերւած թուրքական դատաստանը, որի առաջ և որի համար ժողովուրդը մի խաղալիք է: Ամբոխը գալիս է դատաստան, աղաչում է, խնդրում է, գլուխ է տալիս սորան-նորան, վճնտւում է մէկ ատենանից միւս ատենան, ենթարկւում է հարց ու փորձի և լետով քմահաճ դատաւճիռներից լետով տօն է արձակւում: Ամբոխի շարւած դիրքը և չարաբերութիւնը դէպի դատաստանը հոգեբանական կէտ է, դրողը զանազան մտածմունքներ:

«Խեբան» վէպիկում պարզւած է հետաքրքրական է մի կէտ, որ հալերը աւաղակապետին չարդում են, նորանից պատկառում, քանի կարծում են թէ նա քիւրդ է: Իսկ երբ լմանում են, որ նա հալ է, կորցնում են լախը, չարդանքը, պատկառանքը:

Կարելի էր առաջ բերել և մի երկու էլ հոգեբանական կէտեր, բայց առհասարակ նոցա թիւը շատ սահմանափակ է:

III

Պարոն Փափաղեանը իւր գրւածքներին տւել է պատկերների անունը: Անշուշտ նա ղժւարանում է եղել չարմար բառ գտնել նոցա բովանդա-

կութիւնը և ոճը բնաւորոշելու համար և իսկապէս դժւարութիւն էլ կար Պատկերներն անունը ճիշդ և բնաւորոշ չէ: Նոցանից մի քանիսը, ինչպէս «ձգնաւոր Սիօն» «Խերանը», «Կտակը» և «Գինեգործի աղջիկը» կրում են վէպիկի բնաւորութիւն. նոցա մէջ կան ամփոփ պատմածքներ, «Շահնան» և «Կալծակը» ներկայացնում են պատկերներ, «Հայրիկը» նմանում է փշողութիւնների. արձանագորութեան, մնացածները կարելի կը լինէր անւանել կեանքի գծեր, նկարներ, նկարագրութիւններ, Կարճութեան և հետաւորութեան համար մենք էլ անւանենք նոցա պատկերներ:

Պատկերների մէջ ընթերցողը միշտ որոնում է մի հիմնական հանգուց, որը կապում լինէր նոցա զանազան մասերը և տար նոցա ամբողջութիւն. Թէն հիմնական ալդ կապող մասը բացակա չէ պատկերներից. բայց շատ տեղ թու է և վատ մշակւած. Գուցէ ալդ տեսակ պահանջ չէ կարելի անել «Հայրիկ» պատկերի մասին. բայց արդէն ձգնաւոր Սիօն, Հաջի Աղալի, Շահնալի մէջ պէտք է ամբողջապէս երեսար մասերի ներդաշնակութիւնը և կապը «Կալծակի» մէջ մի քանի բան կարծես զանազան ժամանակներ են գրւած և փտոյ կպցրւած միասին:

Սա վերն ասացի, որ պ. Փափաղեանի պատկերների նիւթը ժամանակակից հետաքրքրութիւն և գրաւչութիւն ունեցող է, որ նա վերաբերում է անպիսի երկրի և մարդկանց, դէպի որոնց դարձրած է մեր հասարակութեան ուշքը: Ամբողջ շարքի ընդհանուր բնաւորութիւնը—նկարագրութիւն է ժողովրդի տառապանքների և լացի և ակնարկներ են նորա պահանջների վերաւ:

Խնդիր է ծագում, թէ օրչափ ճիշտ և բեւեական են աննկարագրութիւնները, ան պատկերները, որ տալիս է հեղինակը, Դա հիմնական խնդիր է և դորա պատասխանից կախւած է ընթերցողի վերաբերմունքը դէպի նոցա նշանակութիւնը:

Իսկ պատասխանը իմ կարծիքով սա է. Պատկերներից մեծ մասի հիմքում դրւած են ճիշդ նկատւած կեանքի երևոյթներ. բայց նոքա մշակւած են ամենամանրաւարար կերպով. ճիշտ է, զիցուք, որ կալ գիւղում հալածանք, ճնշում կառավարիչների կողմից, ճիշդ է, որ վաշխառուն սաստիկ վնասում է գիւղացուն, ճիշտ է, որ քահանաները կանգնած չեն լինում իրանց պաշտօնի բարձրութեան աստիճանում, ալդ բոլորը ճիշտ է, բայց տեսէք թէ ինչպէս է պ. Փափաղեանը մշակում ալդ ճիշտ նկատւած երևոյթները: Նա ալդտեղ չէ պահում իրան ան չըջանի մէջ, որ տալիս է նորան կեանքի հանգամանքների ուսումնասիրութիւնը և սկսում է մի գլուխ գրել, մի կողմում՝ հրէշաւոր կերպով նկարագրելով կառավարի, վաշխառուի, քահանալի թէ կեանքը և թէ նոն իսկ արտաքինը, իսկ միւս կողմում՝ դուրս բերելով զոհերի սրտաճմիկ նկարագրութիւններ, ընթերցողը, վերջացնելով գրւածքը, զգում է մի տեսակ արհեստականութիւն, չինծու-

թիւն կարգացածի մէջ և մոռանում է կարգացածը: «Ճգնաւոր Եղօն», «Ընդհանրի», «Կտակը», «Շահնան», «Հաջի Աղան» անքան բացառիկ կերպով են դուրս բերում կեանքը, որ մարդու մէջ միայն կասկած է չարուցւում դէպի պատկերի ճշտութիւնը:

Պատկերներին մի քանիսը կարծես գրւել են մի դէպքի, մի արկածի տպաւորութեան տակ: Մինչդեռ շատ հասկանալի է, որ ամենայն մի դէպք կեանքի մէջ դեռ չի կարող նիւթ լինել վիպագրութեան համար և ուղիղ արձանագրել նոյնութեամբ: Դէպքը պէտք է բնաւորոյ լինի իւր տեսակների մէջ և նորա մէջ պէտք է համասեւութիւն նկատուի, որպէս զի նա ընթերցանութեան և քննադատութեան պիտանի: Նիւթ կարողանալ դառնալ:

Իսկ երեւութները և անձնաւորութիւնները պէտք է ներքին կապ ունենան և հոգեբանական նուրբ ճշտութիւն, որպէս զի նոքա ընթերցողի համար պարզեն որ և է կեանքի դժեր և բաւականացնեն նորա գեղարւեստական պահանջը:

Մենք վերև ասացինք, որ հեղինակը կանգ չէ առել հոգեբանական նշանաւոր կէտերի վերաբ. Այժմ կարող ենք աւելացնել, որ եղածներն էլ զանցառութեան է տւել, առանց ցոյց տալու ան երեւոյթները, որով հոգեբանական երեւութը ամբողջութիւն է ներկայացնում: Մի խօսքով պ. Փափազեանի պատկերներից բացակա է հոգեբանական քննութիւն կամ վերլուծութիւն ասած բանը: Խաթ-Սաբալի մէջ կան վերաբ. նշանաւոր տեղեր, որոնց մէջ հեղեբանական հարադատութիւնը աչքի է ընկնում և որոնց շնորհիւ վէպը ստանում է հետաքրքրութիւն և գեղարւեստական գրւածքի նշանակութիւն: Այնուհետև՝ Ճգնաւոր Եղօն, «Խերանի», «Հալիկի», «Կտակի», «Կալծակի», «Սև» կղզու և «Գինեգործի աղջկալ» մէջ միայն աղտ հետքեր են նշմարւում հոգեբանօրէն մշակութեան, որոնք բոլորովին բացակա են «Հաջի Աղան», «Լալօ», «Ենդերի», «Շահնա», «Բօսփորի ափերում» և «Արդար դատաստան» պատկերներում:

Հեղինակի նպատակները, հակումները, տենդենցիաները շատ են վարագործել իրանցով ան կեանքը, որ մտադիր է եղել նա նկարագրելու Փոխանակ կեանքի մարդիկ, կենդանի անձնաւորութիւններ ներկայացնելու, հեղինակը հնարել է խրոտիլակներ ու արձաններ և նոցա բռնաւորել զանազան լատկութիւններով: Այդ արձանները արհեստական կերպով շարժւում են և նոցա շարժումներից մնում է միայն մի սառն, անկենդան ադմոսփեր տպաւորութիւն: Տիպիքական անձնաւորութիւններ չկան պատկերների մէջ: Փոքր ի շատէ բաւարար են այդ կողմից Հալիկը, Խաթուն-Մարէն («Կտակի» մէջ), Կալծակը, Խաթ-Սաբան, մասամբ Սև կղզին: Պէտք է նկատեմ, լամենալն դէպս, որ Հալիկը տիպ է, ինչ և լուրջ տպաւորութիւն չէ գործում, Կալծակի հոգեկանը պակասաւոր է, լաւ չէ դուրս բերւած, Խաթ-Սաբան միայն լաջողւած է: Իսկ «Բօսփորի ափերում» պատկերի մէջ արւած են տիպեր նկարելու սկզբնական փորձեր:

Հեղինակը իւր տեսած կեանքում անկասկած արել է սուր դիտողութիւններ և իւր լիշատետրում նշանակել է հետաքրքրական փաստեր, որոնցից լեռով օգուտ է քաղել իւր վէպիկների համար. բայց նա կանգ չէ առել ալդ դիտած, ժողոված փաստերի ա՛յն ներքին փիլիսոփայութեան, ներքին կապի վերաջ, որ կա՛յ իրականութեան մէջ, ալ նոցա ծառայեցրել է իբրև նիւթ, իբրև աղիւս իւր հնարած բովանդակութիւնների համար:

Գիտողութեան և ուսումնասիրութեան է նա պարտ իւր ա՛յն նկարագրութիւնները, որ տալիս է «Կալթակում» (մկնդախաղի մասին), «Թեւրանում», «Հալիկում» «Շահնամում», «Արդար դատաստանում», «Կինեգործի աղջկում», «Թաթ-Սարալում», «Բաֆորի ափերում»: Ախտոս սակալն, որ նկարագրութիւնները ամփոփած են հեքիաթաբանական պատմածքներում, որոնք թէև ծառայում են համակրական նպատակի և ձգտում են մի չափով բարոյական տպաւորութիւն գործելու, սակալն շատ են մակերևութական, զուրկ խորութիւնից, զուրկ հոգեբանական թափանցիկութիւնից:

Հեղինակը միշտ գո՛ւ է մնացել, երբ կարողացել է իւր վէպիկի կամ պատկերի մէջ իւր սիրելի իւր փափկած մտքերից մէկը անցկացնել: Նա սաստիկ միջամտել է թէ հերոսների ընաւորութեան ու գործերի և թէ շրջապատող հանգամանքների դասաւորութեան մէջ. Հերոսները փոխանակ իրանց ասելիքը ասելու, քարոզում են հեղինակի թեւադրած հպեացքները հասարակութեան, ընտանիքի, կրօնի, ամուսնութեան մասին և ալլն, հպեացքներ, որոնց լուսաբանութիւնը կատարած է մի ալնպիսի դարմանալի թեթևութեամբ, որ կարծել է տալիս, թէ հեղինակը չէ հասկանում նոցա լրջութիւնը և նոցա իրական ընաւորութիւնը նկարագրած կեանքի մէջ:

Տենդենցիալի, կամ մի հպեացք պարզելու համար՝ հեղինակը ձգտում է իրան հպատակեցնել նոյն խոկ ընութեան օրէնքները, նա զորօրինակ՝ հեղեղ է լաւաշացնում (Շահնա), երբ դա հարկաւոր կարող է լինել խիստ տպաւորութեան համար, թէկուզ ալդ հեղեղը ամենեկին ներքին կապ չ'ունենալ հասարակական երևոյթի հետ և ալլն: Նա աշխարհագրական տեղերի, կենդանի անձերի, չալոնի ղէպքերի անուաներ է տալիս, որպէսզի պատմածը ստանալ մի տեսակ ճշգրիտ արձանագրութեան կերպարանք: Մինչդեռ պատմածի միւս մասերում նա առանց քաշելու մի դիւթական գաւազանով խաղացնում է գործող, անձերին, նոցա համար ամեն տեսակի ընդհարումներ հնարելով. և՛ սպանում է մարդկանց և՛ խելագարցնում, և՛ հիւանդացնում. և՛ հերոսացնում մինչև Հերքիւլէս և՛ խղճացնում մինչև վերջին որդը:

Հասկանալի են ալնպիսով ա՛յն չափազանցութիւնները և արհեստականութիւնները, որոնք լատկանիչն են ալ. Փափաղեանի իւրաքանչիւր վէպիկի. Օրինակները՝ թիւը ա՛յնքան մեծ է, որ անլորդ է անգամ նոցա տեղնուտեղը նշանակելը. եթէ, զորօրինակ, տոկոսը շատ է վերցւում գիւղա-

ցուց, նա ուղիղ երկու երեք անգամ է վերցնում. եթէ լեռներում կազմել են ժողովրդի պաշտպան առաջակ զինւորներ, նոցա թիւը ուղիղ 500 է, առանց մէկը-երկուը պակաս լինելու. եթէ մարդ զուրս է բերւում անդուծ, նա նկարագրւում է իբրեւ ամենածալրահեղ սատանայ. եթէ պանդուխտը Պոլիս է ընկնում, նա գալթակղւում է մինչև մարդկային կերպարանք կորցնելը. եթէ դալմազամը գործում է, նա ամենահրէշաւոր բռնաւորի տիպ է ներկայացնում և այլն:

Նս ալ ևս չեմ խօսում անճաշակ, անհամ բառերի և սրախօսութիւն-ներին մասին, որոնք բազմաթիւ են վէպիկներում:

IV

Ազգայնով պ. Փափաղեանը ներկայանում է մեր առաջ, իբրեւ մի հեղինակ, որ ունի արած կեանքի դիտողութիւններ, որ զգալուն է դէպի ժողովրդի կեանքի վիճակը և պահանջները, որի ցանկութիւնները՝ ազատ, լուսաւոր, լառաջագէտ դաղափարների կողմն են. բայց որը չը գիտէ մշակել նիւթը վէպի համար, որին անծանօթ են զեղարւեստի հիմնական պահանջները տիպերի և հոգեբանական ուսումնասիրութեան վերաբերմամբ:

Վիպագրութիւնը, թէև կախած է հեղինակի տաղանդից, բայց նա միևնույն ժամանակ զօրաւոր կերպով հետեանք է և բարեխիղճ ուսումնասիրութեան և պատրաստութեան: Վիպասանը պէտք է կրթւի ընտիր օրինակների վերաջ, պէտք է ուշադիր կերպով ուսումնասիրի մարդկային ոգու շարժումները, պէտք է խորասուզւի իրերի և անձերի լարաբերութիւնների աշխարհը, — որպէս զի նորա գրածքը չը դառնալ կամ հում նիւթի սառն դասաւորութիւն կամ միւս կողմից անզուսպ ֆանտազիայի անկարգ արտադրութիւն և հեքիաթաբանական ստեղծագործութիւն:

Պարոն Փափաղեանի բազմաթիւ վէպիկների մէջ գտնւում են մասամբ աչն տարբերը, որոնցից կարող է կազմակերպւել ցանկալի վիպասանը, Գեղարւեստական արտադրութեան տեսակետից լաջող կտորների շատ կան խաթ-Սաբալի մէջ, կենցաղավարական և ժողովրդագիտական նմուշներ ցրւած են «Գինեգործի աղջիկը», «Արդար դատաստան», «Նալձակ» և միւս պատկերներում: Հոգեբանական մի երկու մոմենտների վերաջ մենք մատնացող եղանք վերելք. հետաքրքրական պատմածք, բաւականին կանոնաւոր, ներկայանում է «Խերան»-ում, լաջող նմանողութիւն նկատւում է «Պարսկական Զրոյցներում»: Դժբաղտաբար չենք կարող օրինակներ բերել տիպերի կողմից, որովհետև դոքա բացակա են, չը նալելով աճ կարծիքին, որ ըստ երևութին ունի հեղինակը իւր զուրս բերած հերոսների մասին:

Պարոն Փափաղեանը պէտք է նախ, քան վէպի գրելը, լաւ որոճալ նոր բովանդակութիւնը իւր երեակալութեան մէջ, նորան պատկերացնի

իրեն կեանքի մի վերաստեղծումն և լսող թղթի անցկացնի նորան: Տպելուց առաջ էլ նա պէտք է խիստ քննի և անխնայ կտրատի նորան, ազատելով անկողողաբանութիւններից և արհեստական լաւելածներից: Նա չը պէտք է երբէք զրաւի ալն տեսակ ինքնամիթարիչ բաներով թէ սահապա պատկերում ես խալտառակեցի վաշխառուին, կամ քահանային, կամ միւղիւրին և փաշային, ահտեղ ցոլց տւի հալ բօշալի կատարելիք դերը, հալ քիւրդերի դուռթիւնը և ալլն: Այդ նպատակները՝ վէպի կամ պատկերի կատարելիք գործի միայն մի մասն են կազմում, որովհետեւ պատկերը, եթէ նա պատկեր է, պէտք է հարազատութեան կնիք կրի իւր վերայ և նա «չլիւրդ»-ը չէ լիկ զանազան նպատակների ծառակելու համար ¹⁾։ Նթէ ընթերցողը ազդոււմ է կեանքի պատկերից, ալդ ահն պատճառով է, որ նա հաւատում է հեղինակին, նորա ճշմարտապատում լինելուն: Իսկ եթէ նա համոզւի, որ նորան տւած կեանքի պատկերները շինծու են, ահարաղատ իրականին, հնարած զանազան դիտումներով—նա կամ կը փակի դիրքը, կամ կը կարդալ նորան իբրև հեքիասթ՝ ժամանակ անցկացնելու կամ ուղեղը զբաղեցնելու նպատակով: Աւելացրէք դորան, եթէ պատկերի մէջ պակաս է իրերի, հանգամանքների և միմեանց հետևող երևութիւնների պատճառաբանական կապը, որով միայն զրւածքը ստանում է հետաքրքրական և ուսանելի տեղեկագործութեան կերպարանք:

Յօդւածի սկզբում ասացի, որ հեղինակի ոճը սահուն է, թեթև, Պէտք է սակալն նկատեմ, որ լեզւի մէջ կան շատ անկանոնութիւններ, որոնք՝ իմ կարծիքով՝ հեղինակի արագագրութեան, սաստիկ շտապելու և անուշադրութեան հետեանքն են: Կտրծես հեղինակը երբէք լստ չի կարդում իւր գրւածքը, ալ ուղիղ լանձնում է տպագրութեան:

Վիպասաններ մենք քիչ ունենք. նա մանաւանդ ահալիսներ, որոնց գրիչը նւիրած լինէր թիւրքահալ ժողովրդի կեանքին: Յաւալի կը լինի, եթէ պարոն Փափազեանի նման մի վիպագրող, որ արել է դիտողութիւններ ալդ կեանքի վերաբերմամբ և որը զուրկ չէ ահն տարրերից, որոնցից կարող է կազմակերպել վիպասան, մնալ իւր ներկալ դրութեան մէջ և փոխանակ գեղարւեստական պատկերներ տալու, ներկալացնի արհեստական կերպով կազմած վէպիկներ, լի չտիպազանցութիւններով և անբնականութիւններով: Վէպն էլ մի տեսակ օրգանական շինածք է, որը պէտք է օրինաւոր կերպով կազմակերպւի երևակալութեան աշխարհում և լսող գրի անցնել:

¹⁾ Իս չէ նշանակում, որ վէպը չը պէտք է պարունակի իւր մէջ տեսնուցեալ, կամ նպատակ, Ընդհակառակը, նա պէտք է զգեսկցական ստեղծագործութեան արդիւնք լինի և հաստատ նպատակների ծառայող մօքի ծնունդ: Սակայն կեանքը չը պէտք է գուր բերել վէպում աշխարհաւոր: Մի ուրիշ անգամ կ'օգտւենք առիթից աւելի մանրամասն խօսելու այս կէտի մասին: